



ԲԱՑ
ՕԼԻՄՊԻԱԴԱ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ
2022-2023

Մաթեմատիկա (4-րդ դասարան)

Անուն Ազգանուն _____

Դպրոց _____

Դասարան _____ Խումբ _____

Մաթեմատիկան թագուհին է բոլոր գիտությունների...

Կ. Գառու

Մաղթում ենք հաջողություն:


1. (3 միավոր) Ինչպե՞ս տեղավորել 8 այծերին և 9 սագերին 5 գոմում այնպես, որ յուրաքանչյուր գոմում լինեն և՛ սագ, և՛ այծ, ընդ որում բոլորը միասին ունենան 10 ոտք:

2. (3 միավոր) Միքայելը, Կարենը և Միերը ամառային արձակուրդներն անցկացրին ճեմարանի «Հեքիաթ» ճամբարում: Հայտնի է, որ նրանցից յուրաքանչյուրն ունի Հարությունյան, Սարգսյան և Պողոսյան ազգանուններից մեկը: Միքայելը Պողոսյան չէ: Կարենի հայրը ճարտարապետ է: Կարենը սովորում է 6-րդ դասարանում, իսկ Պողոսյանը 5-րդում: Հարությունյանի հայրը ուսուցիչ է: Գտնել տղաների ազգանունները:


3. (3 միավոր) Տնօրոլային խաղի հաղթող թիմը ստանում է 3 միավոր, իսկ պարտվողը՝ 0 միավոր: Եթե խաղն ավարտվում է ոչ-ոքի, ապա երկու թիմերից յուրաքանչյուրը ստանում է 1-ական միավոր: Թիմը խաղացել է 38 խաղ՝ վաստակելով 80 միավոր: Ամենաշատը քանի՞ խաղում կարող է պարտված լինել թիմը:

4. (3 միավոր) Կախարդական այգում աճում են կախարդական ծառեր: Յուրաքանչյուր ծառի վրա կան 6 տանձ ու 3 խնձոր կամ 8 տանձ ու 4 խնձոր: Այգում կա 25 խնձոր: Քանի՞ ծառ և քանի՞ տանձ կա այգում :

5. (4 միավոր) Յուրաքանչյուր սրվակի տակ դու կարող ես կարդալ դրա ուժը, որպեսզի մեկը մյուսի հետ չշփոթես, հակառակ դեպքում մեծ խառնաշփոթ կլինի: Օգտվելով ստորև նշված հուշումներից, գտի՛ր սրվակների գույները և գրի՛ր: /2 միավոր /




- Առանց կափարիչի և պիտակի սրվակը չի պարունակում ո՛չ կարմիր, ո՛չ էլ կանաչ թուրմ:
- Ամենաուժեղ թուրմը կարմիրն է:
- Դեղին թուրմերը պիտակ չունեն և իրար մոտ չեն գտնվում:
- Կանաչ թուրմերից մեկը գտնվում է դեղինի և կարմիրի միջև:
- Բոլոր սրվակները, որոնք պարունակում են կարմիր թուրմ, ունեն պիտակ:
- Գումարելով կանաչ թուրմերի կախարդական ուժը՝ ստանում ենք 6:




6. (4 միավոր) Օգտվելով նկարներում բերված տվյալներից՝ որոշի՛ր մրգերից յուրաքանչյուրի արժեքը:


310 դրամ



270 դրամ



260 դրամ



Պատասխան՝  = _____ դրամ,

 = _____ դրամ,

 = _____ դրամ: